



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գործ՝ ՀՀ վաստակաւոր նկարիչ
Սամուէլ Լաճիկեանի



ԻԲՐԵՒ ԽՄԲԱՎՐԱԿԱՆ

Կամայ յառնում է դէպքն այն հեռաւոր անցեալի, երբ համազգական մի իրադարձութեան տարեդարձի նախընթաց պահերին Հայոց Կարին քաղաքի բնակիչները խնդրանօք դիմեցին Սարգիս Ճարտասանին, որ ներբողական բանքով հանդէս գայ եւ գնահատանքի խօսքեր հնչեցնի օրուայ խորհրդի վերաբերեալ: Սակայն հռետորը, որ յայտնի էր ամենեցուն իր բեմբասացական կարողութիւններով, քարոզիչը, որ ցանկացած պահի եւ ցանկացած նիւթի վերաբերեալ կարող էր հանդէս գալ, իմաստասէրը, որ անպարտ էր անուանուել իր տրամաբանութեան, մտքի ճկունութեան եւ կատարեալ խօսքի համար, թերեւս կեանքում առաջին անգամ հրաժարուեց, խուսափեց կամ ձեռնպահ մնաց հանդէս գալուց: Եւ որն էր պատճառը, որն էր հրաժարուելու հիմնաւորումը. ինքը Սարգիս Ճարտասանը ձեւակերպում էր այսպէս. «Ես չեմ այրն այն արժանաւոր... հիմա չէ... պահն այն պատեհական, եւ սա չէ վայրն այն փափագելի, ուր տեղին եւ հնարաւոր է հնչեցնել խօսքը գնահատանքի. որովհետեւ իրադարձութիւնները, որոնց ներկայ ենք ամենքս, իրադարձութիւնները, որ տեսնում, ընկալում եւ ըստ մեր կարողութիւնների փորձում ենք քննել եւ արժեւորել, իրականում ո՛չ ես, ո՛չ դուք՝ չենք կարող հիմա հասկանալ եւ գիտակցել ամբողջութեամբ. օրուաս արժէքն ու գնահատականը կտան միայն ու միայն ժամանակն ու պատմութիւնը եւ այն էլ՝ մեզնից հազար, կամ նոյն իսկ հազարաւոր տարիներ յետոյ»:

Նոյնն է նաեւ մեր պարագան. մենք չենք այն արժանաւորները... եւ բաւական չեն ու որեւէ կերպ չեն կարող բաւականացնել պահն ու վայրն

այս, որ թէկուզ պարզ կամ մակերեսային գնահատական հնչեցուի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գործունէութեան վերաբերեալ: Այսօր Վեհափառ Հայրապետն աշխարհի տարբեր ծագերից ընդունում է գնահատանքի, քաջառողջութեան, նորանոր յաջողութիւնների եւ որ գլխաւորն է՝ զօրակցութեան ու յաղթութիւնների բազմաթիւ մաղթանքներ, սակայն ամեն դէպքում՝ իրական, արդար եւ արժեւորելի գնահատականը կտան լոկ ժամանակն ու պատմութիւնը, եւ ամենակարեւորը՝ սերունդները, շնորհակալ հայորդիները ապագայի:

Յ. Գ. Երկրում տիրող ընկերային-տնտեսական նաեւ աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանաւորուած Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդեան 70-ամեակի յոբելեանական հանդիսութիւնները շեղարկուեցին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծննդեան առիթով շնորհաւորանքներ ու բարեմաղթանքներ են յղել մի շարք եկեղեցապետեր, կրօնապետեր, հայ եւ օտար բարձրաստիճան պետական եւ հոգեւոր այրեր, հասարակական, քաղաքական, դիւանագիտական, մշակութային եւ այլ ոլորտների բազմաթիւ գործիչներ: Սոյն համարում ներկայացուած են շնորհաւորանքներից որոշները: